«ՀԵԾԱՆԻՎ»՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Երեկ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում (ԳԱԱ) տեղի ունեցավ «Գիտական եւ տեխնոլոգիական ներուժ եւ արդյունավետություն. արդի համաշխարհային մոտեցումներ եւ փորձ» ձեռնարկի շնորհանդեսը: Այն «Եվրոդրական ինտեգրման գրադարան» շարքի 9-րդ հատորն է: AEPLAC ընկերության թարգմանությամբ՝ այստեղ ներկայացված են Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) մշակած գիտական տարբեր ձեռնարկներից քաղվածքներ: Մասնագետները կարծում են, որ այսոիսի ձեռնարկների գոյությունը գիտնականին հնարավորություն է տալիս մի ոդաի կտրվել իր գիտական հետազոտությունների դաշտից՝ տեղեկանալով այն զարգացումներին, որոնք տեղի են ունենում մեր շուրջը: *«Լավ կլիներ, որ ավելի շուտ անդրադառնայինք գիտական բարեփոխումներին»,*- նկատեց ՀՀ ԿԳ փոխնախարար Արա Ավետիսյանը: Իսկ AEPLAC-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Տիգրան Զրբաշյանը իր զարմանքն այս կերոդ հայտնեց. *«Ինչոմես է դատահել, որ մի երկրում, որտեղ դեռ 1990-ականներից իրականացվում են գիտական բարեփոխումներ, չեն փորձել հետաքրքրվել, թե աշխարհն ինչոմես է սահմանում «գիտություն» ասվածը: Իհարկե, մենք խելոք ազգ ենք, սակայն հեծանիվ դետք չէ հայտնաբերել՝ այն արդեն հայտնաբերված է: Մնում է վերցնել ու հարմարեցնել մեր երկրին»:*

ՏԱԹԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ